ԺԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԲԵԼԱՌՈՒՍ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊՀ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ (1993-2003)

1991թ. հետխորհրդային տարածքում ձևավորվեց նոր տարածաշրջանային միջազգային կազմակերպություն Անկախ Պետությունների Համագործակցությունը (ԱՊՀ), որին անդամակցեց նաև Հայաստանի Հանրապետությունը:

ՀՀ համար, թե տնտեսական, թե ռազմաքաղաքական տեսանկյունից անհրաժեշտ էր պահպանել և զարգացնել կապերը նախկին միութենական հանրապետությունների հետ, քանի որ 1991թ. ՀՀ արտահանման 98%-ը, իսկ ներմուծման 81%-ը բաժին էր ընկնում ԱՊՀ-ին[1], ուստի ամենևին էլ պատահական չէր Հայաստանի գործուն մասնակցությունը ԱՊՀ ինտեգրմանը: Այս կառույցի ստեղծման առաջին իսկ օրից Հայաստանը հայտարարեց, որ մասնակցելու է բոլոր այն ձեռնարկներին, որոնք ուղղված կլինեն ԱՊՀ անդամ երկրների տնտեսական ինտեգրմանը, համագործակցության մյուս ձևերին, որոնք չեն հակասի ՀՀ շահերին:

Ի տարբերություն ԱՊՀ անդամ այլ երկրների, որոնք առաջին տարիներին առավել ոգևորված էին բոլոր խնդիրներում ընդհանուր լուծումներ գտնելու գաղափարով Հայաստանը առաջ քաշեց նաև ԱՊՀ շրջանակներում երկկողմ, եռակողմ համագործակցության ձևաչափը չհրաժարվելով ընդհանուր խնդիրներում կառուցողական մասնակցությունից:Ուստի բազմակողմ տնտեսական և ռազմաքաղաքական համագործակցությանը զուգահեռ ՀՀ իշխանությունները սկսեցին զարգացնել նաև երկկողմ հարաբերությունները ԱՊՀ անդամ երկրների հետ: Հայաստանի և Բելառուսի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվել են 1993թ. հունիսի 12-ին, համապատասխան Արձանագրության ստորագրությամբ, որին հաջորդեց Բելառուսում ՀՀ դեսպանատան բացումը[2], ինչը վկայում էր Հայաստանի կողմից Բելառուսի հետ հարաբերությունները զարգացնելու կարևորության մասին: Երկու երկրների համար կարևոր էր փոխշահավետ տնտեսական համագործակցությունը:

Անկախության հռչակումից հետո Բելառուսի իշխանությունները իրենց երկրի արտաքին քաղաքականության ԱՊՀ շրջանակներում ինտեգրմանն ուղղված վեկտորը գերակայեցին եվրոպական կողմնորոշման նկատմամբ: Թույլ եվրոպամետությունը պայմանավորված էր Բելառուսում բնակչության

---

[1] 10 лет Содружества Независимых Государств (1991-2000): Статистический сборник, Москва, 2001, с.72.

[2] «Հայաստանի Հանրապետություն», 26 մայիս 2001.

մեծամասնության, ներառյալ քաղաքական վերնախավի, մոտ պահպանվող «միութենական» կամ ռուսամետ դիրքորոշմամբ: Ինչպես Հայաստանը, այնպես էլ Բելառուսը ԱՊՀ ձևավորման պահին տնտեսապես կապված էր վերջինիս 1991թ. Բելառուսի արտահանման 91%-ը և ներմուծման 88%-ը բաժին էր ընկնում ԱՊՀ երկրներին[3]:

Թեև երկկողմ հարաբերությունները զարգացնելու նպատակով 1993-1998թթ. Հայաստանը և Բելառուսը ստորագրել էին մի շարք միջկառավարական համաձայնագրեր, որոնք վերաբերում են առևտրատնտեսական համագործակցությանը, օդային հաղորդակցությանը, ավտոմոբիլային հաղորդակցությանը[4], սակայն Հայաստան-Բելառուս հարաբերությունները զարգանում էին հիմնականում ԱՊՀ շրջանակներում, ինչը հավանաբար պայմանավորված էր Բելառուսում տիրող ներքաղաքական իրավիճակով. Ալ. Լուկաշենկոյի և իր վարչակազմի, ինչպես նաև 1996թ. ընդունված սահմանադրության ու Ազգային Ժողովի նկատմամբ Արևմուտքի բացասական վերաբերմունքով և մերժողական դիրքորոշումով: 1998թ. սկսած բելառուսական կողմը որոշակի ակտիվություն ցուցաբերեց Հայաստանի հետ երկկողմ հարաբերությունները զարգացնելու համար: Այն մասամբ պայմանավորված էր Ռուսաստան-Բելառուս Միության ստեղծման հետ, ինչը լայն արձագանք ստացավ նաև Հայաստանի հասարակության որոշ շրջաններում: Սակայն երկկողմ տնտեսական համագործակցությունը զարգացնելու համար անհրաժեշտություն զգացվեց ընդլայնել համապատասխան իրավապայմանագրային դաշտը, որի ուղղությամբ և սկսեցին աշխատել կողմերը: Արդեն 1998 թ. մայիսի 29-ին ՀՀ Արդյունաբերության և առևտրի նախարարության ներկայացուցչի Բելառուս կատարած այցելության ընթացքում «Բելռեսուրս» հանրապետական կոնցեռնի հետ ստորագրվեց մտադրությունների մասին արձանագրություն, որի համաձայն, կողմերը փոխանակեցին միմյանց առաքման համար առաջարկվող ազգային արտադրանքի ապրանքացանկերը և որոշեցին կազմել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ապրանքների ցանկ ու մշակել առաքումների հետ կապված հաշվարկների փոխընդունելի տարբերակ[5]: Այսպիսով ուրվագծվեցին Հայաստանի և Բելառուսի միջև տնտեսական համագործակցության հետագա զարգացման նախնական ելակետերը:

Հայ-բելառուսական փոխշահավետ տնտեսական կապերի ամրապնդման նպատակով երկու երկրների կառավարությունների որոշմամբ 1999թ. ստեղծ-

---

[3] 10 лет Содружества Независимых Государств (1991-2000): Статистический сборник, с.72.

[4] Տե՛ս Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի Ժողովածու 1996-1998 թթ., Երևան, 2002, էջ 430:

[5] Տե՛ս ՀՀ ԱԳՆ արխիվ, գ. 5, գ. 275, թ. 2:

վեց Հայաստանի և Բելառուսի առևտրատնտեսական համագործակցության միջկառավարական համատեղ հանձնաժողով, ինչի շնորհիվ երկու երկրների միջև տնտեսական համագործակցությանը խթանող մի շարք փաստաթղթեր են ստորագրվել: Երկկողմ հարաբերությունները խորացնելու նպատակով 2000 թ. հունիսի 19-20-ին Բելառուսի վարչապետ Վ. Երմոշինի հրավերով Մինսկ մեկնեց ՀՀ վարչապետ Ա.Մարգարյանը, որը նաև հանդիպում ունեցավ նախագահ Ալ. Լուկաշենկոյի հետ: Հանդիպման ժամանակ երկու կողմերն էլ արձանագրեցին, որ քաղաքական խնդիրներ Հայաստանն ու Բելառուսը չունեն առկա է լիակատար փոխըմբռնում: Իր հերթին Ալ. Լուկաշենկոն բարձր գնահատեց Հայաստանին որպես Կովկասում Բելառուսի ԱՊՀ ռազմավարական գործընկերոջ[6]: ՀՀ վարչապետի այցի ընթացքում ստորագրվեցին շուրջ մեկ տասնյակ միջկառավարական համաձայնագրեր այդ թվում բարձրագույն որակավորման գիտական և գիտամանկավարժական կադրերի ատեստավորման բնագավառում համագործակցության, եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու, ագրոարդյունաբերական ոլորտում տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության, ֆինանսական և բանկային բնագավառներում փոխգործակցության մասին[7]: Նույն թվականի հոկտեմբերին Հայաստան ժամանեց Բելառուսի վարչապետը: Այսպիսով վարչապետների փոխայցերը, միջկառավարական հանձնաժողովի նիստերը, իրավապայմանագրային դաշտի զգալի ընդլայնումը նոր որակ հաղորդեցին Հայաստան-Բելառուս տնտեսական հարաբերություններին:

Հայ-բելառուսական հարաբերություններում կարևոր փուլ էր Բելառուսի նախագահ Ալ. Լուկաշենկոյի պաշտոնական այցը Հայաստան 2001 թ. մայիսի 26-27-ին: Նպատակ ունենալով զարգացնել հարաբերությունները քաղաքական, տնտեսական, մշակութային և մյուս բնագավառներում, ինչպես նաև պահպանել ԱՊՀ շրջանակներում երկու պետությունների կողմից ստորագրված փաստաթղթերում, մասնավորապես 1992թ. մայիսի 15-ի հավաքական անվտանգության պայմանագրում (ՀԱՊ) պարունակվող պարտավորությունները, երկու երկրների նախագահները Երևանում ստորագրեցին «Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջև բարեկամության համագործակցության մասին» պայմանագիրը, որի համաձայն կողմերը պետք է նպաստեն «սպառազինությունների սահմանափակման և զինաթափման գործընթացի շարունակմանը, միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման գործում Միավորված ազգերի կազմակերպության դերի ամրապնդմանը, Եվրոպայում կոլեկտիվ անվտանգության համակարգի

---

[6] «Ազգ», 20 յուլիս 2000:
[7] Տե՛ս նույն տեղում:

ստեղծմանը, ամբողջ աշխարհում վստահության և անվտանգության ամրապնդման միջոցների ընդունմանը, ինչպես նաև ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի և ՍՊՀ-ի խաղաղարար դերի ամրապնդմանը նպաստող մեխանիզմների և ինստիտուտների հաստատմանը» (հոդ. 2)[8]: Պաշտպանության ոլորտում սերտ համագործակցություն է նախատեսում պայմանագրի երրորդ հոդվածը, ըստ որի «Երբ այնպիսի իրավիճակ է ստեղծվում, որը, Բարձր պայմանավորվող կողմերից մեկի կարծիքով, սպառնալիք է առաջացնում խաղաղության համար, խախտում կամ շոշափում է իր անվտանգության, տարածքային ամբողջականության և ինքնիշխանության շահերը, նա կարող է անհապաղ խորհրդակցություններ անցկացնելու առաջարկով դիմել մյուս Բարձր պայմանավորվող կողմին: Այդ խորհրդակցությունների ընթացքում կորոշվեն այն օգնության անհրաժեշտությունը, ձևերը և չափը, որը մի Բարձր պայմանավորվող կողմը կցուցաբերի մյուս Բարձր պայմանավորվող կողմին պաշտպանությունն ապահովելու, ծագած իրավիճակի հաղթահարմանը նպաստելու և խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու նպատակով»[9]: Քսաներեք հոդվածից բաղկացած այս պայմանագիրը արտացոլում է երկու երկրների փոխհարաբերությունների մակարդակը: Բելառուսի նախագահի այցի ընթացքում քննարկվեցին նաև ռազմական համագործակցության այլ խնդիրներին վերաբերող հարցեր, մասնավորապես «երկու երկրների պաշտպանական գերատեսչությունների միջև համաձայնություն ձեռք բերվեց անհրաժեշտության դեպքում Հայաստանին ապահովել սարքավորումներով և ապրանքներով»[10]: Բելառուսի նախագահը այցելեց նաև հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր, որտեղ անդրադառնալով հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին հայտնեց, որ «Բելառուսի ժողովուրդը և պետությունը պարտք չեն մնա հայերին»[11]:

Հայաստանը և Բելառուսը հանդիսանալով ՀԱՊ-ի, իսկ ներկայումս նաև Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ արդյունավետ համագործակցում են ռազմաքաղաքական և ռազմական կադրերի պատրաստման ոլորտներում[12]:Դեռ 2000 թ. Մինսկ այցելեց ՀՀ Պաշտպանության նախարարության պատվիրակությունը, ինչը որոշակի անհանգստություն առաջացրեց Ադրբեջանում և Թուրքիայում: Ադրբեջանի

---

[8] Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1999-2001 թթ., Երևան, 2002, էջ 352:
[9] Նույն տեղում, էջ 353:
[10] «Ազգ», 29 մայիս 2001:
[11] Տե՛ս նույն տեղում:
[12] В. Д. Николаенко, Коллективная безопасность России и ее союзников. Военно-политическая интеграция на постсоветском пространстве, Москва, 2003, с. 111.

նախագահ Հ. Ալիևը Վաշինգտոնում ստանալով ՀՀ ՊՆ պատվիրակության այցի մասին լուրը իր անհանգստությունն էր հայտնել և հայտարարել. «Սկզբում Մոսկվան հետո Մինսկը: Դա կարող է լուրջ բարդություններ առաջացնել Հարավային Կովկասում»[13]: Սակայն բելառուսական կողմը Բելառուսում Թուրքիայի դեսպանին հիշեցրել էր, որ Հայաստանը և Բելառուսը ՀԱՊ-ի անդամ են, իսկ ռազմական բնագավառում հայ-բելառուսական համագործակցությունը կրում է զուտ պաշտպանական բնույթ և ուղղված չէ երրորդ երկրների դեմ. Իր հերթին բելառուսական կողմը կարծիք էր հայտնել Թուրքիայի դեսպանին, որ հայ-թուրքական հարաբերություններում «Թուրքիան պետք է ավելի բաց լինի Հայաստանի համար»[14]:

Չնայած որ Հայաստանի և Բելառուսի միջև քաղաքական հարաբերությունները բարձր մակարդակի վրա են, սակայն 1993-2003 թթ. երկու երկրների միջև արտաքին առևտրի ծավալները ի տարբերություն ԱՊՀ անդամ Ռուսաստանի կամ Ուկրաինայի արժեքային առումով շատ ավելի պակաս էին: Անկախությունից հետո Բելառուսի կառավարությունը ընտրեց այնպիսի սոցիալական կողմնորոշում ունեցող տնտեսական զարգացման ռազմավարություն, որը էականորեն տարբերվում էր ԱՊՀ անցումային տնտեսություն ունեցող երկրներից: 1997 թ. Հայաստանի և Բելառուսի միջև առևտրաշրջանառությունը կազմել է 4.4 մլն ԱՄՆ դոլար, ընդորում արտահանումը կազմել է 1.1 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը 3.3 մլն ԱՄՆ դոլար[15]: Սակայն 1998 թ. սկսած մինչև 2000 թ. արձանագրվեց նվազում, (2000 թ. 1997թվականի համեմատ 65.9%-ով), իսկ 2001 թ. Հայաստանի և Բելառուսի միջև ապրանքաշրջանառությունը կազմել է 2.4 մլն ԱՄՆ դոլար, որից արտահանումը 1.4 մլն ԱՄՆ դոլար[16]: Արդեն 2002 թվականին 2000 թ. համեմատ ծավալներն ավելացան մոտ 1.3 անգամ կազմելով 3.5 մլն ԱՄՆ դոլար: 2003 թ. երբ Հայաստանը անդամակցեց Առևտրի Համաշխարհային Կազմակերպությանը (ԱՀԿ) Բելառուսի հետ արտաքին առևտուրը կազմեց արտահանումը 2 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը 5.1 մլն ԱՄՆ դոլար, (այսինքն 2002 թ. համեմատությամբ արտահանումը աճել է 33.3%-ով, իսկ ներմուծումը մոտ 1.5 անգամ)[17]: Այսպիսով ԱՀԿ-ին անդամակցելուց հետո Հայաստանի արտաքին առևտրաշրջանառությունը մեծացել է հիմնականում

---

[13] ՀՀ ԱԳՆ արխիվ, ց. 6, գ.132, թ. 56:
[14] Նույն տեղում, թ. 59:
[15] Առևտրի Համաշխարհային Կազմակերպության անդամակցության ազդեցությունը Հայաստանի արտաքին առևտրատնտեսական համակարգի վրա, խմբ. Թ. Թորոսյան, Երևան, 2004, էջ 75:
[16] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 5 հունիս 2002:
[17] Առևտրի Համաշխարհային Կազմակերպության անդամակցության ազդեցությունը Հայաստանի արտաքին առևտրատնտեսական համակարգի վրա, էջ 76:

ներմուծման ավելացմամբ, ինչը սակայն պայմանավորված չէր ԱՀԿ-ին անդամակցումով, քանի որ Բելառուսը ԱՀԿ-ի անդամ չէր, չնայած որ 1993 թվականից Բելառուսը ցանկություն հայտնեց անդամակցելու ԱՀԿ-ին և նույն թվականին էլ ստեղծվեց Բելառուսի անդամակցության աշխատանքային խումբ: Դեռ 1992 թ. Տարիֆների և առևտրի գլխավոր համաձայնագրի (ՏԱԳՀ) գլխավոր խորհրդի կողմից Բելառուսին շնորհվեց դիտորդի կարգավիճակ: ԱՀԿ-ին անդամակցելու համար Աշխատանքային խումբը ունեցել է մի շարք հանդիպումներ, որի ընթացքում քննարկվել են գյուղատնտեսության, Ռուսաստանի հետ միության ստեղծման, ԱՊՀ այլ երկրների հետ ունեցած համաձայնագրերի և այլ ոլորտների հարցեր:

Թեև Բելառուսը ԱՊՀ Մաքսային միության անդամ է, սակայն միջազգային առևտրատնտեսական հարաբերություններում ակտիվանալու համար, ԱՊՀ Մաքսային միության մեկ այլ անդամ Ղազախստանի հետ 1999 թ. ստորագրեց մի պայմանագիր, որը բխում էր միջազգային առևտրի նորմերից, սակայն հակասում էր Մաքսային միության օրենքին, ընդորում մինչ այդ նման քայլի էր դիմել Ղրղզստանը, որը նույնպես ԱՊՀ Մաքսային միության անդամ է: Հակասությունը առնչվում էր երկրի ապրանքաշրջանառությունում ավելացած արժեքի և աքցիզային հարկերի գանձման կարգին: Միջազգային առևտրում գանձումը կատարվում է ներմուծող երկրում, Մաքսային միության պայմանագրով արտահանող երկրում: Մաքսային միության անդամ երկրների միջև այս դրությը խեղվել էր և նշված հարկերը կրկնակի գանձման էին ենթարկվում, այսինքն ապրանքներց ԱԱՀ գանձվում էր թե արտահանող, թե ներմուծող երկրներում արհեստականորեն բարձրացնելով գները: Բելառուսի ԱԳՆ-ն Ղազախստանի հետ ստորագրած պայմանագիրը մեկնաբանեց, «որպես քայլ Բելառուսը ԱՀԿ-ին անդամագրելու գործընթացին»[18]:

Չնայած Բելառուսը 1995թ. դադարեցրել էր իր անդամակցությունը Արժույթի միջազգային հիմնադրամին (ԱՄՀ), սակայն Ռուսաստանի ֆինանսական ճգնաժամից կրած վնասների պատճառով, անսպասելիորեն դիմեց ԱՄՀ-ին 100 մլն ԱՄՆ դոլար վարկի խնդրանքով: Մինսկի կողմից նման քաղաքականությունը հավանաբար կապված էր երկրում տիրող տնտեսական ճգնաժամով:

Ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական հարցերում ևս Բելառուսը 1990-ական թվականների վերջերից քայլեր էր կատարում Արևմուտքի հետ հարաբերությունները կարգավորելու համար: Ալ. Լուկաշենկոն Եվրոպական Միության հետ հարաբերությունների ամրապնդումը հիմնավորում էր նրանով, որ «Չի կարող լինել միասնական Եվրոպա, եթե երկաթե վարագույրի

---

[18] «Հայաստանի Հանրապետություն», 12 փետրվար1999:

փոխարեն իջնի «առևտրական վարագույր», եթե բեռլինյան պատի փոխարեն բարձրանա մասնաբաժինների և արգելակիչ մաքսերի պատ: Եվրոմիության ընդլայնումը չպետք է փակի դուռը Եվրոպայի այլ պետությունների համար, որոնք ինչպես և Բելառուսը ցանկանում են ապրել Եվրոպական տանը»[19]: Բելառուսի նկատմամբ Արևմուտքի որդեգրած քաղաքականության մեջ հետաքրքիր էր այն, որ մի կողմից քննադատելով Բելառուսի իշխանություններին և կոչ անելով միջազգային հանրությանը զերծ մնալ վերջինիս հետ հարաբերությունների զարգացումից, մյուս կողմից Արևմուտքը ակտիվ քաղաքականություն էր տանում տնտեսական ներթափանցման ուղղությամբ: 1990-ական թվականներից արդեն Բելառուսում գործում էր «Ford»-ի մասնաճյուղը, ստորագրվել էին համագործակցության պայմանագրեր գերմանական «MAN»-ի, «Siemens»-ի, «Continental»-ի հետ, ինչպես նաև բացվել էին արևմտյան այլ ընկերությունների ներկայացուցչություններ: 1998թ. ԱՄՆ նախագահ Բ. Քլինթոնը տեղեկացրեց ԱՄՆ Կոնգրեսին 12 ամսով Բելառուսի հետ առևտրում առավել բարենպաստ ռեժիմ տրամադրելու իր մտադրության մասին[20]: Այս ամենը վկայում են այն մասին, որ չնայած քաղաքական ոլորտում առկա տարաձայնությունների տնտեսականում լուրջ համագործակցության միտումներ կային և արևմտյան գործարարները մտադիր չէին կորցնել բելառուսական շուկան:

Ի տարբերություն ԱՊՀ մյուս երկրների Բելառուս-ՆԱՏՕ հարաբերությունները առավել սերտորեն են կապված Ռուսաստան-ՆԱՏՕ հարաբերություններից. Դեռ 1996թ. Բելառուսի իշխանությունները այդ թվում նաև հասարակական-քաղաքական մի շարք կազմակերպություններ ՆԱՏՕ-ի դեպի Արևելք ընդլայնման քաղաքականությունը դիտում էին որպես բացասական և երկրի շահերին հակասող երևույթ, թեև Բելառուսը մասնակցում է «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրին, բայց միաժամանակ խուսափում է ռազմական սերտ համագործակցությունից: 1996 թ. ԱՊՀ արտաքին գործերի նախարարների խորհրդի (ԱԳՆԽ) նիստում Բելառուսի ներկայացուցիչը հայտարարեց միանշանակ աջակցություն ՆԱՏՕ-ի Արևելք ընդլայնման հարցում Ռուսաստանի դիրքորոշմանը[21]: Թեև Ռուսաստանի և Բելառուսի ղեկավարները հավաստիացնում են, որ Ռուսաստան-Բելառուս Միությունը ուղղված չէ ՆԱՏՕ-ի դեմ, բայց արևմտյան քաղաքագետները այն դիտում են ՆԱՏՕ-ի դեպի Արևելք ընդլայնմանը դիմակայող պատնեշ[22]:

---

[19] ՀՀ ԱԳՆ արխիվ, ց. 6, գ.132, թ.16:
[20] Տե՛ս ՀՀ ԱԳՆ արխիվ, ց. 5, գ. 275, թ. 4.
[21] Նույն տեղում, ց. 1, գ. 163, թ. 174:
[22] Տե՛ս Ռ. Кальвокарессы, Мировая политика 1945-2000, кн. 1. Москва, 2003, с. 91.

Արևմուտքի հետ հարաբերությունների բացը Բելառուսը փորձում էր փոխհատուցել Ասիայի և Մերձավոր Արևելքի երկրների հետ հարաբերությունները զարգացնելով: Այս մասին է վկայում 1998 թ. Ալ. Լուկաշենկոյի կատարած այցերը Ճապոնիա, Իրան, Սիրիա, Եգիպտոս: Բելառուսը ակտիվ հարաբերություններ է զարգացրել Չինաստանի, Վիետնամի, Թուրքիայի, Լիբանանի, Հնդկաստանի, Տաջիկստանի հետ: Ուշագրավ է, որ վերը նշված գրեթե բոլոր պետությունների հետ Ռուսաստանը ունի բավականին լավ հարաբերություններ, այս առումով նույնպես բացատրելի էր դառնում Հայաստանի հետ հարաբերությունների զարգացման Բելառուսի ձգտումը:

Հայ-բելառուսական հարաբերություններում կարևոր տեղ է զբաղեցնում նաև Բելառուսի հայ համայնքը: 2002 թ. տվյալներով Բելառուսում բնակվում էր 30 հազ. հայ՝ քանակային առումով զբաղեցնելով վեցերորդ տեղը բելառուսներից, ռուսներից, լեհերից, ուկրաինացիներից և հրեաներից հետո[23]: 2001թ. ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության միջև բարեկամության համագործակցության մասին» պայմանագրով երկու կողմերը պետք է պետական աջակցություն ցուցաբերեն Բելառուսի Հանրապետությունում բնակվող հայերի ազգային մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը և Հայաստանի Հանրապետությունում բելառուսների, մասնավորապես հասարակական, ազգային-մշակութային միավորումներին մշակութային-լուսավորչական, հրատարակչական գործունեությունում, մայրենի լեզվի ուսուցման, գեղարվեստական կոլեկտիվների փոխանակմանը[24]: Դեռ 1990 թ. Մինսկում հիմնադրվել էր «Հայաստան» կրթամշակութային կազմակերպությունը, 1991 թվականից գործում է հայկական կիրակնօրյա դպրոց, իսկ 1998 թվականից «Երեբունի» ազգագրական խումբը: Մինսկի հայ համայնքի ջանքերով Ալեքսանդր Նևսկու եկեղեցու բակում խաչքար է տեղադրվել հայոց ցեղասպանության և 1988թ. երկրաշարժի զոհերի հիշատակին: 2002 թ. Բելառուս կատարած պաշտոնական այցի ընթացքում ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը հանդիպում ունեցավ նաև տեղի հայ համայնքի հետ:

Թե Հայաստանը և թե Բելառուսը ԱՊՀ ինտեգրման ակտիվ մասնակիցներից են, սակայն ի տարբերություն Բելառուսի Հայաստանը չանդամակցեց ԱՊՀ Մաքսային միությանը, ինչը բացատրվում է նրանով, որ ՀՀ կառավարությունը որդեգրելով արտաքին առևտրի ազատական քաղաքականություն ձևավորել էր տարիֆային և ոչ տարիֆային կարգավորման ինքնուրույն համակարգ,

---

[23] «Հայաստանի Հանրապետություն», 7 հունիս 2002:
[24] Տե՛ս Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1999-2001 թթ., էջ 355:

որը զգալիորեն տարբերվում էր և լիբերալ էր ԱՊՀ մյուս պետություններում, այդ թվում նաև Ռուսաստանում գործող համակարգից: Հայաստանի ներգրավվելը ԱՊՀ անդամ երկրների Մաքսային միությանը, փաստորեն Հայաստանին մեծ չափով կզրկեր ինքնուրույն արտաքին առևտրից: Բացի դրանից անդամակցումը Մաքսային միությանը կարող էր հետաձգել Հայաստանի անդամակցությունը ԱՀԿ-ին, ինչը բացասական ազդեցություն կունենար օտարերկրյա ներդրումների ներգրավման համար:

Հայաստանը չանդամակցեց նաև Ռուսաստան-Բելառուս Միությանը, 1990-ական թվականների վերջերին ՀՀ իշխանությունները անդամակցության հարցը համարում էին աննպատակահարմար և ժամանակավրեպ: Ռուսաստան-Բելառուս Միությանն անդամակցելը տարածաշրջանում կարող էր առաջացնել բաժանարար գծեր, որը չէր բխում ոչ Հայաստանի և ոչ էլ Ռուսաստանի շահերից: Այսպիսով, եթե Մաքսային միությանը չանդամակցելու դեպքում առկա էին տնտեսական, ապա Ռուսաստան-Բելառուս Միությանը չանդամակցելու պարագայում քաղաքական պատճառներ:

Հայաստանը և Բելառուսը հաջողությամբ համագործակցում են, ոչ միայն ԱՊՀ շրջանակներում, այլև մի շարք միջազգային կազմակերպություններում, մասնավորապես Բելառուսը սատարել է Հայաստանին 2000թ. մայիսին UNICEF-ի Գործադիր Կոմիտեի ընտրությունների ժամանակ, 2001թ. ապրիլին ժնևում Բելառուսը համահեղինակել է Հայաստանի առաջարկած Ցեղասպանության կանխարգելման մասին բանաձևը, ինչպես նաև պաշտպանել է Հայաստանի թեկնածությունը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի ընտրություններում[25]: Գործելով փոխադարձ աջակցության սկզբունքով Հայաստանը իր հերթին Բելառուսին աջակցություն է ցուցաբերել ԵԱՀԿ կառույցներում Բելառուսի վերաբերյալ քննարկումների ժամանակ:

Այսպիսով հայ-բելառուսական փոխհարաբերությունները հեռանկարային են և համապատասխանում են մեր երկրի շահերին, ուստի կարևոր է զարգացնել փոխշահավետ համագործակցությունը տնտեսական և ռազմա-քաղաքական ուղղություններով:

---

[25] «Հայաստանի Հանրապետություն», 5 հունիս 2002: